

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 81'276.6:62:19

Հ.Ց. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՀԱՅԵՐԵՆ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**

Ցանկացած լեզվում մասնագիտական բառապաշարը կարող է ի հայտ գալ հասարակական հարաբերությունների զարգացմանը համընթաց՝ գիտության տարբեր բնագավառների, գիտական գրականության, ուսումնական հաստատությունների պահանջով առաջ եկած մասնագիտական գրականության և այդ բոլորի հետևանքով՝ համապատասխան բառարանագրության զարգացման արդյունքում: Իսկ գիտատեխնիկական տերմինների առաջացումը մասնագիտական բառաշերտում մեծապես պայմանավորված է նաև տեխնիկայի, արտադրության տարբեր ճյուղերի և արտադրահարաբերությունների զարգացմամբ:

Աշխատանքում քննվում են հայ իրականության մեջ գիտատեխնիկական տերմինների առաջացման և իբրև տերմինահամակարգեր ձևավորման հարցերը: Ցույց է տրվում, որ հայկական տպագրության հիմնադրումից հետո ստեղծված բառարանների և հատկապես Մխիթարյան միաբանների բառարանագրության մեջ ու գիտական բնույթի աշխատություններում գիտական հասկացությունների համար գործածված անվանումները ոչ միայն հայերենի բառապաշարի, այլև հայերեն գիտատեխնիկական տերմինաբանության հիմքն են կազմում: Բառարաններում ընդգրկված հասկացությունների անվանումներից շատերն այսօր գիտատեխնիկական հատկապես ավանդական դարձած բնագավառների՝ էլեկտրատեխնիկայի, մեխանիկայի և մեքենագիտության, լեռնահանքային, երկրաբանական, քիմիական և այլ բնագավառների տերմիններ են:

Առանցքային բառեր. գիտության, արտադրության և բարձրագույն կրթության զարգացում, բառարանագրություն, մասնագիտական բառապաշար, գիտատեխնիկական տերմինահամակարգեր:

Տերմինաբանության՝ որպես մեր ժամանակներում հասարակության հարաշարժ առաջընթացին ուղեկից երևույթի ուսումնասիրությունը մշտապես արդիական է, եթե ենթադրում է նրա զարգացման շրջանների, վերջիններիս բնորոշ փոխհարաբերությունների, տերմինաբանական առավել ընդհանուր օրինաչափությունների կամ առանձին իրողությունների հստակեցում, որի վերջնական նպատակը տերմինակարգավորումն է: Գիտական-գիտատեխնիկական տերմինահամակարգերի զարգացման օրինաչափությունների բացահայտումը հնարավորություն է ընձեռում մասնագետներին՝ քննելու տերմինաբանական իրողությունները և կատարելու որոշակի առաջարկություններ համակարգերի կարգա-

վորման, միօրինակացման-նորմավորման վերաբերյալ, ինչով և պայմանավորված է սույն ուսումնասիրության արդիականությունը:

Հայերեն գիտատեխնիկական տերմինաբանության ակունքները դարերի խորքը չեն գնում, ինչպես որ հայ իրականության մեջ կարելի է ասել փիլիսոփայական, լեզվաբանական, բնագիտական որոշակի ուղղությունների և բժշկագիտական-դեղագործական հայերեն տերմինաբանությունների առաջացման մասին:

Բնագիտական հասկացություններից հայերեն մետաղանունների, թանկարժեք քարանունների, ինչպես և արհեստավորանիշ հասկացությունների անվանումների հնագույն շերտն է, որ կարող է որոշակի առումով դիտվել այսօրվա երկրաբանական-լեռնահանքային, քիմիական-մետալուրգիական և հարակից բնագավառների տերմինաբանությունների սկզբնավորման նախահիմք: Հարուստ լինելով բնական պաշարներով՝ Հայկական լեռնաշխարհը՝ իբրև մարդկության քաղաքակրթության հնագույն բնօրրան, դեռևս վաղնջական ժամանակներում հայտնի է եղել մետաղագործական, հետագայում՝ նաև ակնագործական արտադրությամբ և թանկարժեք քարերի ու մետաղների վաճառահանությամբ [1]: «Առանձին արհեստներից հայերի, այդ թվում՝ նաև վաղնջահայերի մեջ լավ զարգացած են եղել կառուցողական արհեստը, ատաղձագործությունը, մետաղագործությունը, դարբնությունը, կավագործությունը. հմմտ. *ալտաղձ, երիթ, թործ, թորիծ, մուրճ, թակն, գերան, հեծան, ձող, սիւն, թիթեղն, շաղախ, դարբին, թեքեմ(կոեյ), սալ, հալեմ, ձուլեմ, բով, հնոց, դուրգն, արծնեմ և այլն*» [2]: Չարդարանք և առևտուր նշանակող հնդեվրոպական արմատներից, ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, նույն ժամանակներից գործածական են եղել *ակն, արծաթ, գինդ, գին, գնեմ, զարդ, մալրանի, մեծագին, տուրևառ*, ինչպես նաև վաղնջահայերենի մեջ թափանցած *սպարանջան, մանեակ* և նման այլ բառերը:

Գրավոր շրջանում մետաղների և թանկարժեք քարերի հայերեն անվանումների հանդիպում ենք նախ՝ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ, այնուհետև՝ ինքնուրույն և թարգմանական երկերում [3]: Սակայն «... նշված աշխատանքներում բնագիտական հարցերը ներկայացված են փիլիսոփայության հետ սերտորեն առնչված, և Շիրակացին առաջին հեղինակն է հայ իրականության մեջ, որ բնական գիտությունը բաժանեց, առանձնացրեց փիլիսոփայությունից» [4]: Շիրակացու աշխատություններով վաղ միջնադարյան Հայաստանում «բնագիտական խնդրակարգը վերածվեց հետազոտության ինքնուրույն բնագավառի, իսկ բնագիտությունը՝ ինքնուրույն գիտելիքի» [5]: Շիրակացու աշխատություններից «Յաղագս ականց պատուականաց» աշխատանքը, որն ընդգրկում է թանկարժեք քարերի 22 անվանումներ, կարող է համարվել նախահիմք երկրաբանական և լեռնահանքային որոշակի տերմինների զարգացման համար, քանի

որ դրանցից 18-ն այսօր ճիշտ նույն կերպ կամ բառի աննշան զարգացումներով և ճիշտ նույն իմաստներով գործածվում են իբրև համապատասխան հասկացությունների տերմիններ [3]:

Ինչ վերաբերում է արտադրությունների և արտադրահարաբերությունների զարգացմանը, ապա մինչև ուշ միջնադարը Հայաստանի տնտեսական կյանքում կարևոր դեր են խաղացել արհեստները, «որոնք մի կողմից՝ կապված էին գյուղատնտեսական հումքի մշակման, մյուս կողմից՝ հանքահանության և մետաղահանության զարգացման, անտառանյութի, քարի, կավի օգտագործման հետ» [6]: Առանձնապես զարգացած են եղել փայտի և մետաղի մշակության հետ կապված արհեստները՝ հյուսնությունը, պայտարությունը, դարբնությունը: Վերջինից հետագայում անջատվում են փականագործությունը, զինագործությունը, առաջին պլան է մղվում ոսկերչությունը: «Միջին դարերում արհեստագործությունը հողագործի երկրորդական զբաղմունքից դառնում է արտադրության ինքնուրույն բնագավառ» [6]:

Սակայն արհեստների հետ կապված հասկացությունների անվանումների՝ հետագա դարեր գրավոր ավանդմանը խոչընդոտել են երկու-երեք հանգամանք: Առաջինն այն է, որ արհեստները սերնդեսերունդ փոխանցվել են բանավոր, երկրորդ՝ թարգմանական և ինքնուրույն գրականության մեջ չի նկատվում անդրադարձ միջնադարյան Հայաստանի արտադրատնտեսական հարաբերություններին, ուստի այդ երկերում նման տերմինների գործածության կամ ձեռագիր բառարաններում դրանց մեկնության անհրաժեշտություն չի եղել [7], երրորդ՝ միջնադարում, պայմանավորված գիտության զարգացման սինկրետիկ բնույթով, գիտակարգերը (հիմնականում հասարակական գիտությունների) զարգանում էին փիլիսոփայության հետ գիրկընդխառն, որը, բնականաբար, արհեստներին կամ արտադրատնտեսական հարաբերություններին առնչվող հասկացություններ չէր ներառում [4]: Մյուս կողմից՝ պատմական ճակատագրի բերումով հայ ժողովուրդը, մշտապես շփվելով նվաճողների լեզուների հետ (հունարեն, պարսկերեն, արաբերեն, մոնղոլ-թաթարերեն, թուրքերեն և այլն), շատ հաճախ արհեստագործությանն առնչվող հասկացությունների համար բանավոր խոսքում, հատկապես բարբառներում, գործածել է այլալեզու համարժեքները: Օրինակ՝ *ալաբաստր*, *նալ*, *սադափ*, *գաճ*, *կլայեկ*, *շիպ* (արաբ.), *խագ*, *ճաղ*, *փոցխ* (վրաց.), *բաբան*, *բարութ*, *բուխարիկ*, *խամութ*, *մասուրա*, *զնջիլ*, *մեխ*, *թոզ*, *սվաղ*, *ծեփ*, *չաքունճ*, *քյուլունճ*, *քյանդիր*, *մանդալ* (թուրք.), *լաթ*, *ճանկ* (պրսկ.) և այլն: Սրանց մի մասն անցել է գրական լեզվին և այսօր գործածվում է նաև որպես տերմիններ:

Օտար տիրապետությունների տակ մասնատված Հայաստանում մինչև 19-րդ դարը արտադրությունների և արտադրահարաբերությունների լուրջ զար-

գացման մասին խոսել անհնար է: Եղած արտադրությունները շարունակում էին մնալ արհեստագործության մակարդակում [6]:

Չնայած այդ ամենին, սկսած 17-րդ դարից, հայ իրականության մեջ տեղի է ունեցել մի աննախադեպ երևույթ. հայ տպագրության հիմնադրումից հետո սկզբնավորվում է իր ժամանակի համար չափազանց արժեքավոր հայերեն բառարանագրությունը նախ՝ լատինաբանների (Ռոքշա, Կաստելլոս, Ռիվոլա, Վիլլոդ և այլք) ջանքերով, ովքեր լատիներենից թարգմանաբար ներկայացրին նոր աշխարհի քաղաքակրթությանը համընթաց առաջ եկած հասկացությունների հայերեն անվանումները: Դրանցից են, օրինակ, *աշխատանք*, *արբանեակ*, *բաժանիչ*, *բարձրացուցիչ*, *բեռ*, *բեռնամբարձ*, *բեռնատար*, *բեւեռ*, *գնացք*, *գործարան* (երկաթագործի), *զորութիւն*, *զուգակշիռ*, *ինքնաշարժ*, *լար*, *լիցք*, *լուսավորութիւն*, *խարիսխ*, *խեժ*, *կարողութիւն*, *կցորդ*, *հալոց*, *հեծան*, *ձող*, *ձուլածոյ*, *ղեկ*, *մարտկոց*, *մեքենայ* (ինքնաշարժ, մեծ քարեր վեր բարձրացնող, ջուր մղող), *յարդարիչ*, *նախագիծ*, *շաղախ*, *շարժում*, *շղթայ*, *չափիչ*, *ջահ*, *ջերմ*, *սաթ*, *վերամբարձ*, *վերելակ*, *տարր*, *փաթոյթ*, *քարահալ*, *քարշել*, *ոյժ* և այլ բառեր, որոնց գերակշիռ մասն այսօր վերածվել է տերմինների:

Այս աշխատանքը 18-19-րդ դարում շարունակեցին Մխիթարյան միաբանները: Մխիթարյանների հսկայածավալ աշխատանքի արգասիքը՝ Հին և Նոր Հայկագյան և մյուս բառարանները, ընդգրկում են հայերենի ոչ միայն գրերի գյուտից հետո գրավոր ավանդված, այլև ժամանակի բանավոր-բարբառային ամբողջ բառապաշարը, ինչպես և նրանց կողմից նոր հասկացությունների համար ստեղծված հազարավոր բառերը: Մխիթարյանների բառարանագրությունը դարձավ բառապաշարային այն հաստատուն պատվանդանը, որի վրա իրենց զարգացումը շարունակեցին աշխարհաբարի երկու տարբերակները: «Մեր ամենից կատարյալ բառարանն է «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի»... պարունակում է գրաբարի բոլոր բառերը անխտիր, մասամբ նաև միջին հայերենի բառերը» [8]: «Մխիթարյանների գործունեության շնորհիվ էր նաև, որ գրաբարը, ինչպես որ աշխարհաբարի ծնողն էր, այժմ էլ դարձավ նրա դայակն ու սնուցիչը: Բացվեց մեր առաջ հին գրականության անբավ գանձարանը. առատության մի անսպառ աղբյուր, որից նոր լեզուն կարող էր օգտվել ուզած չափով և ուզած ձևով» [8]: Այդ ձևերից մեկն էլ ավանդված բառապաշարը հետագայում իբրև տերմինաբանության աղբյուր գործածելն էր:

Գրաբարը, ինչպես նկատում է Աճառյանը, արգելք չէր հանդիսանում աշխարհաբարի զարգացման ընթացքին, որը ներառում էր ոչ միայն գրաբարյան, միջինհայերենյան, բարբառային, ժողովրդախոսակցական բառապաշարային շերտեր, այլև ի հայտ եկող նոր հասկացությունների, այդ թվում՝ տերմինա-

յին արժեք ներկայացնող հասկացությունների համար անընդհատ ու անընդհատ կերտվող նոր բառերը: Այդ նորակերտ բառերի մի հսկայական քանակ կա նաև Մխիթարյանների բառարաններում: Նրանց կողմից ավանդված բառապաշարի նշանակալից մասն այսօր կամ նույնությամբ, կամ իմաստափոխությամբ վերածվել է տարբեր բնագավառների տերմինների: Տերմինաբանության, մասնավորապես՝ գիտատեխնիկական տերմինաբանության զարգացման առումով էական նշանակություն ունեցան Մխիթարյանների նաև ճյուղային բառարանները [9], ավելին՝ տեսական որոշակի աշխատությունները [10]:

Մ. Քաջունու բառարանում [9], օրինակ, ներառված բառապաշարի զգալի մասն այսօր գործածական է իբրև մեխանիկայի ու մեքենագիտության և հարակից բնագավառների տերմիններ: Դրանցից են՝ *ազուցիկ, արքան, անի, առանցք, անկում, արամնաւոր, ասեղ, արտակենտրոն, բազմաճախարակ, բազուկ, գլան, դարձեակ, երիթ, երկժանի, երկճղի, զանգուած, զսպանակ, թմբուկ, լիսեռ, լծակ, խտացուցիչ, ծանրոց, կաթսայ, կափարիչ, կենտրոն, կենտրոնախոյս, հակաբեռ, հաւասարակշռութիւն, հետագիծ, ճանկ, ճոճանակ, մարտկոց, միոց, հեսան, յետադարձ, շառաւիղ, շարժիչ, շփում, պարոյր, պրուրակ, սեպ, սկաւառակ, սողնակ, տեղաշարժ, տուփ, ցցահար, ուղղագիծ, փոխանցում, փորոք, օդահան* և այլն: Այս բառերն իբրև տերմիններ իրենց գործնական կիրառությունն են գտել հեղինակի «Մեքենականութիւն» աշխատության [10] մեջ, որը փաստորեն մեխանիկայի դասագիրք է, և եվրոպական երկրներում, արդյունաբերական հեղափոխությամբ պայմանավորված, մեխանիկայի մի նոր ճյուղի՝ մեքենագիտության առաջացման նկատմամբ հետաքրքրության արձագանքը հայ իրականության մեջ: Ներկայացված են *ուժի, շարժման, տեղափոխության, աշխատանքի* և մեխանիկայի այլ առանցքային հասկացությունները և առանձին բաժինները՝ *սրտափական, կինեմատիկական, դինամիկական*, գաղափար է տրվում աերո- և հիդրոդինամիկաների մասին, կա նաև կիրառական մեխանիկային՝ նավերի, քամու և գոլորշու ուժով աշխատող մեքենաների աշխատանքի սկզբունքներին նվիրված բաժին [11]: «Քաջունու մշակած այս ոլորտի (արհեստավորանիշ անվանումների խմբի – Հ.Պ.) բառապաշարը, մաքրվելով հնաբան գրաբարյան երևույթներից, հավելուրդային համանիշ-հոմանշությունից, յուրացվեց նոր գրական հայերենի զույգ ճյուղերի կողմից: Շատ կարևոր նշանակություն ունեցավ նրա՝ հայոց լեզվին հարազատ բառակազմական կաղապարների ճիշտ օգտագործման հմտությունը» [12]:

Անցնող ժամանակի մեջ ամենատարբեր կողմերից կարելի է դիտարկել և արժևորել Մխիթարյանների ստեղծած հարուստ ժառանգությունը: Այսպես. Մխիթարյանների բառարանագրության արժեքը անցյալի բառապաշարը պահ-

պանելու և փոխանցելու, այլև այդ բառապաշարը նորովի, հատկապես տարաբնույթ տերմինաբանական շերտերով հարստացնելու և հետագա բառարանագրության համար հզոր հիմք դառնալու իրողությունն է: Այսինքն՝ Մխիթարյանների գործունեությամբ պայմանավորվեց մի շատ կարևոր հանգամանք. Հնարավոր եղավ հայոց լեզվի բառակազմական, այլև իմաստաբանական կարելիություններն ի սպաս դնել գիտական-գիտատեխնիկական տերմինակազմության նոր-նոր ձևավորվող աշխատանքներում: Մխիթարյանների բառարանագրության մեջ հատկանշական է իրենց ժամանակի համար նոր հասկացությունների բազմաթիվ անվանում-տերմինների ստեղծման իրողությունը: Բառարաններն ընդգրկում են գիտատեխնիկական այսօր արդեն ավանդական դիտվող բնագավառների՝ էլեկտրատեխնիկայի, մեխանիկայի և մեքենագիտության, լեռնահանքային, երկրաբանական, քիմիական և այլ հասկացությունների անվանումներ, որոնք արդեն իսկ նույն բնագավառների տերմիններ են [13]:

Ինչ խոսք, բարձրագույն կրթության համակարգ, գիտություններ (մասնավորապես տեխնիկական), արդյունաբերություն չունեցող նախախորհրդային Հայաստանում գիտատեխնիկական տերմինաբանության լուրջ զարգացման մասին խոսելն անհնար է, քանի որ հայ կյանքում շրջանառության մեջ դրվելու առանձնապես նպաստավոր հող (պահանջ ու ոլորտ) չունենալով, այդ տերմինները հիմնականում մնում էին որպես բառարանային հարստություն: Դրանք հետագայում, թելադրված կրթական գործի, գիտության և արդյունաբերության զարգացման պահանջով, լայնորեն ներառվեցին գիտական-մասնագիտական գրականության մեջ ու ճյուղային բառարաններում և ձեռք բերելով կենսունակություն՝ լիակատար իմաստով վերաճվեցին տերմինների:

Սակայն Մխիթարյանների գործունեության ամենակարևոր կողմը, թերևս, հայ իրականությանն անձանոթ հասկացությունների անվանում-տերմինները թարգմանելու ճանապարհով հայ ժողովրդին համաշխարհային քաղաքակրթության արժեքներին հաղորդակից դարձնելն էր: Լինելով ժամանակի առաջադեմ մտածողներ, Մխիթարյանները հասկացան, որ, անկախ տնտեսության և հասարակական կյանքի մյուս բնագավառների զարգացման մակարդակից, հայ ժողովուրդը չի կարող հաղորդակից չդառնալ համամարդկային քաղաքակրթության առաջընթացին, և հայոց լեզուն իր զարգացման հետագա ընթացքի մեջ չի կարող չներառել նորագույն հասկացությունների անվանում-տերմինները [14]: Լեզվաշինության մեջ Մխիթարյանների այս մոտեցումն այսօր ավելի քան արդիական է և ընդօրինակման արժանի, քանի որ մեր օրերում, գիտության և տեխնիկայի աննախընթաց արագությամբ զարգացման պայմաններում, հայ իրականություն է թափանցում մեծ քանակությամբ փոխառյալ տերմինների հոսք, որոնք

թարգմանաբար յուրացնելու համար հարկ կլինի կրկնել Մխիթարյանների սխրանքը:

Արևելահայ իրականության մեջ գիտական և գիտատեխնիկական տերմինաբանության սկզբնավորման առումով երևույթ էր հատկապես ռուս-հայերեն, հայ-ռուսերեն բառարանագրության զարգացումը, որի գագաթնակետը Հարություն Դադբաշյանի երկլեզվյան բառարաններն էին: Դրանք արժեքավոր են իրենց բառացանկի հարստությամբ, ընդգրկում են կյանքի առաջընթացը, գիտության, տեխնիկայի, արվեստի ու մշակույթի զարգացումն արտահայտող մեծ թվով հասկացությունների համար նորակերտ բառեր ու անվանումներ: Այս շրջանում թարգմանվեցին և հրատարակվեցին նաև բնագիտական բնույթի մի քանի աշխատություններ [15], սակայն ռուսերենի միջոցով փոխառյալ տերմինների առկայության պարագայում աննշան է դրանց դերը հայերեն տերմինաշինության գործում:

Արևելահայ գրական լեզվում գիտատեխնիկական տերմինաբանության ձևավորումը XIX դ. վերջին և XX դ. առաջին տասնամյակներին պայմանավորված էր նաև նախախորհրդային Հայաստանի մի քանի ձեռնարկությունների արտադրանքը ու արտադրական պարզունակ գործընթացները ներկայացնող գիտատեխնիկական սահմանափակ հասկացությունների անվանումների գործածությամբ: Հայաստանում առաջին մեխանիկական-թուջածուլական գործարանը, օրինակ, արտադրում էր [16] *մամիչներ, պոմպեր, խցանակալներ, քամհար, ձիթհան, բրնձազարիչ մեքենաներ, ջեռուցման կաթսաներ, կշռաքարեր, ջրմուղկոյուղու սարքավորումներ, մեքարյա կոնստրուկցիաներ, գյուղատնտեսական գործիքներ և կենցաղային իրեր*, որոնց հայերեն կամ փոխառյալ անվանումներն այսօր կազմում են էլեկտրատեխնիկական, մեխանիկայի, մեքենաշինական, մետալուրգիական և հարակից բնագավառների տերմինների շերտը հայերեն գիտական տերմինաբանության մեջ: Նկատելի է, սակայն, որ նախախորհրդային շրջանում արևելահայոց մեջ հայերեն գիտատեխնիկական տերմինաշինությունը չհասավ զարգացման այնպիսի ծավալի ու գիտական մակարդակի, որպիսին ձեռք բերվեց Մխիթարյանների գործունեությամբ:

Այս ամենով հանդերձ, նախախորհրդային շրջանում թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ իրականության մեջ արդեն դրվել էր հայերեն գիտական-գիտատեխնիկական տերմինաբանության հիմքը, որի վրա ձևավորվեցին և հետագա զարգացում ապրեցին գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառների տերմինները [11]: Սկզբնավորվել էր հայերեն գիտատեխնիկական ավանդական, այն է՝ էլեկտրատեխնիկական, մեխանիկայի, մեքենաշինության, երկրաբանության, լեռնահանքային, քիմիական, մետալուրգիական, ավտոմոբիլաշինության

տերմինաբանության ձևավորման նախնական փուլը, որի բառարանագրումն իրողություն դարձավ հիմնականում այլ լեզուներից կատարված թարգմանությունների կամ թարգմանության ընթացքում տերմինակերտումների ճանապարհով: Թարգմանությամբ առաջ եկած տերմինային բառապաշարի հիմնական զանգվածն իբրև հասկացությունների անվանումներ առկա է Մխիթարյանների բառարաններում կամ բնագիտական բնույթի նրանց աշխատություններում: Այդ բառերը հետագայում լայնորեն ներառվեցին հայերեն գիտատեխնիկական բառարանագրության նորագույն շրջանի (XX դ. սկզբից մինչև այսօր) բառարաններում, որոնց հիմքով զարգացան հատկապես ավանդական համարվող տերմինահամակարգերը: Հետագա այդ բառարանների՝ գիտատեխնիկական տերմինահամակարգերի ձևավորման ու զարգացման առումով քննությունը այլ ուսումնասիրության նյութ կարող է լինել:

Այսպիսով, նոր շրջանի բառարանագրության և մասնագիտական փոքրաթիվ գրականության մեջ գերիշխում են թարգմանական-հանրագիտական բնույթի բառարանները և թարգմանական աշխատությունները: Բառարանագրության առումով սա միանգամայն օրինաչափ է, քանի որ տերմինաբանական բնույթի ինքնուրույն բառարաններ ստեղծվում են, երբ տվյալ իրականության մեջ նկատելի է գիտության բնագավառների կամ գիտական-մասնագիտական գրականության քիչ թե շատ զարգացում: Այսինքն՝ մասնագիտական-տերմինաբանական բառարանագրությունը հետևանք է գիտության զարգացման: Մինչդեռ հայերիս մեջ բառարանագրության զարգացման այս նոր շրջանում նկատելի է եղել հակառակը. թարգմանաբար կամ թարգմանության պահանջով կերտված տերմինաբանական բառապաշարի հավաքագրումը և՛ արևմտահայ, և՛ արևելահայ իրականության մեջ նախորդեց գիտությունների, բարձրագույն կրթության և արդյունաբերության զարգացմանը: Ընդ որում, տերմինների զարգացումն ընթացել է տերմինային բառապաշարի զարգացման օրինաչափություններին համապատասխան. դրանք առաջնահերթ ստեղծված բառարաններում կամ գրականության մեջ նախապես ի հայտ են եկել որպես քվազիտերմիններ կամ մինչտերմիններ, տերմինոիդներ կամ տերմինանմաններ և նախատերմիններ [17]: Սրանք գործածվել են այնքան ժամանակ, քանի դեռ տեսական մասնագիտական գրականության մեջ և ճյուղային բառարաններում, իսկ մեր ժամանակներում՝ նաև տերմինաբանական կազմակերպությունների կողմից համապատասխան ստանդարտներում չեն ամրապնդվել, հստակեցվել և հաստատագրվել որպես տերմիններ:

Ամփոփելով վերն ասվածը՝ կարելի է եզրակացնել.

1. Օրինաչափ է, որ, ի տարբերություն հումանիտար և բնագիտական որոշակի գիտակարգերի տերմինաբանությունների, գիտատեխնիկական տերմինաբանությունը որևէ լեզվում առաջ է գալիս բարձր ձևով կազմակերպված հասարակական-արտադրական հարաբերությունների, գիտության և տեխնիկայի, համապատասխան բարձրագույն կրթության զարգացման արդյունքում: Այս իրողություններից բառերի տերմինացման առումով կարևորը նրանց՝ գիտական-մասնագիտական գրականության մեջ իբրև տերմիններ գործածվելու փաստն է, քանի որ բառը տերմինի արժեք ձեռք է բերում համապատասխան տեսության ոլորտում կիրառություն գտնելով [17]:

2. Վերոհիշյալ օրինաչափությունը հայ իրականության մեջ առաջանցիկ բնույթով խախտվել է՝ շնորհիվ Մխիթարյան միաբանների գործունեության, որի արգասիքը եղան հայերենի բառապաշարի բազմազան շերտերը, այդ թվում՝ գիտական-գիտատեխնիկական հասկացությունների անվանումներ ընդգրկող բառարաններն ու աշխատությունները: Մխիթարյանների ջանքերով ավանդված բառապաշարը դարձավ հիմք հայերեն գիտատեխնիկական ավանդական բնագավառների տերմինահամակարգերի զարգացման համար և այսօր էլ լայնորեն օգտագործվում է գիտական-գիտատեխնիկական տերմինների կերտման գործընթացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Այվազյան Հ.Մ.**, Հայերեն մետաղանունների ծագումնաբանության հարցի շուրջ // Բանբեր Եր. համալս., Ե., 1985, էջ 182-193:
2. **Ջահուկյան Գ.Բ.**, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Ե., 1987, էջ 263-265:
3. **Պետրոսյան Հ.Ց.**, Անանիա Շիրակացու «Յաղագս ականց պատուականաց» աշխատությունը և հայերեն բնագիտական տերմինաբանության սկզբնավորումը վաղ միջնադարյան Հայաստանում//ՀՃԱ Լրաբեր, հտ.3, համար 1, Ե., 2006, էջ 86-96:
4. **Աբրահամյան Ա.Գ.**, Անանիա Շիրակացի. Հայ մշակույթի նշանավոր գործիչները, Ե., 1976, էջ 111-124:
5. **Միրումյան Կ.Ա.**, Անանիա Շիրակացի, Ե., 1998, էջ 169:
6. **Անանյան Լ.**, Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր, Ե., 2003, էջ 81:
7. **Ամալյան Հ.Մ.**, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները. V-XV դդ., Ե., 1966, 241 էջ: XVI-XVII դդ., Ե., 1971, 314 էջ:
8. **Աճառյան Հր.**, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Ե., 1951, էջ 489 և 478:
9. **Քաջունի Մ.**, Բառգիրք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց, Վենետիկ, 1891-1893: **Երեմյան Ս.**, Պատկերազարդ բառգիրք գործնական գիտութեանց, Վենետիկ, 1900:

10. **Քաջունի Մ.**, Տարրաբանութիւն, Վենետիկ, 1870: Բնաբանութիւն, Վենետիկ, 1871: Մեքենականութիւն, Վենետիկ, 1872: **Երեմյան Ս.**, Նոր հանքաբանութիւն, Վենետիկ, 1898: Երկրաբանութիւն, 1885 և 1893:
11. **Պետրոսյան Հ.Յ.**, Հայերեն մեքենագիտական և մեքենաշինական տերմինների իմաստաբանական-կառուցվածքային և գործառական վերլուծություն. Թեկն. Ատենախոս., Ե., 2007, 157 էջ:
12. **Ավետիսյան Լ.Վ.**, Արիեստ-արիեստավորանիշ անվանումները հայերենում, Ե., 2015, էջ 20:
13. **Հացագործյան Ջ.Ա.**, Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարան, Ե., 1988, 672 էջ:
14. **Պետրոսյան Հ.Յ.**, Հայերեն գիտատեխնիկական (մեքենագիտական-մեքենաշինական) տերմինաբանության արտացոլումը հայ բառարանագրության հին և նոր շրջանների բառարաններում//Հայերենագիտության հիմնահարցեր և զարգացման հեռանկարներ. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 2013, էջ 41-50:
15. **Պաուլոսն**, Տարրական ֆիզիկա ըստ Կրիզերի, Թիֆլիս, 1877: **Ջ. Գրիգորյանց**, Բնագիտություն, Թիֆլիս, 1896: **Հ. էլիբեկյան**, Ֆիզիկա, Թիֆլիս, 1917 և այլն:
16. **Վիրաբյան Ա.**, Սովետական Հայաստանի մեքենաշինության զարգացման ուղիները, Ե., 1977, էջ 7:
17. **Պետրոսյան Հ.Յ.**, Տերմինագիտության հիմունքներ. Դասագիրք, Ե., 2010, էջ 125:

А.Ц. ПЕТРОСЯН

ИЗ ИСТОРИИ РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ НАУЧНО-ТЕХНИЧЕСКОЙ ТЕРМИНОЛОГИИ

В любом языке профессиональная терминология может появляться параллельно с развитием общественных отношений в результате формируемой в соответствии с требованиями учебных заведений профессиональной литературы и, следовательно, развития соответствующей лексикографии. В свою очередь, появление научно-технических терминов в профессиональном лексическом слое преимущественно обусловлено также развитием техники, разных отраслей промышленности и производственных отношений.

В работе исследуются вопросы появления в армянской действительности научно-технических терминов и их формирования в качестве терминологических систем. Показано, что в составленных после основания армянского книгопечатания печатных словарях и особенно в лексикографии мхитаристов, а также в их трудах научного характера названия, применяемые для научных понятий, являются основой не только армянского словарного запаса, но и научно-технической терминологии. Многие из включенных в словари названий научных понятий сегодня уже являются терминами таких традиционных отраслей, как электротехника, механика и машиноведение, а также горнодобывающей, геологической и химической отраслей.

Ключевые слова: развитие науки, промышленности и высшего образования, лексикография, профессиональный словарный запас, научно-технические терминосистемы.

A.Ts. PETROSYAN

ON THE HISTORY OF DEVELOPMENT OF THE ARMENIAN SCIENTIFIC AND TECHNICAL TERMINOLOGY

In any language, the professional vocabulary can arise together with the development of public relations as a result of professional literature created by the demand of different spheres of science, scientific literature and educational establishments, and all these require the development of lexicography. The creation of scientific and technical terms among the professional words is greatly conditioned by the development of engineering, different branches of industry and production relationships. The issues on the origin of scientific and technical terms and their formation as terminological systems in the Armenian reality are considered. It is shown that since the beginning of the Armenian printing press, the names used for scientific concepts in the created printed dictionaries, particularly in the lexicography of the Mechitarist monks and scientific works have been a basis not only for the Armenian word-stock, but also for the Armenian scientific and technical terminology. Many of the names of the concepts included in the dictionaries are terms belonging to traditional areas of science and engineering: electrical engineering, mechanics and machine science, mining, geology, chemistry.

Keywords: development of science, industry and higher education, lexicography, professional vocabulary, scientific and technical term systems.

ՀՏԴ 82-94

Մ.Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20-ՐԴ ԴԱՐԻ ԾՈԿԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՀԱՅ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Քննվում է 20-րդ դարի շոկերի՝ հայ հուշագրության վրա ունեցած հոգեբանական և գիտակցական ազդեցության խնդիրը: Կատարված է շոկերի ժամանակագրական խմբավորում:

Առանցքային բառեր. հուշագրություն, հիշողություն, շոկ, հոգեբանություն, գիտակցություն:

Ներածություն: «Շոկ» տերմինը կիրառվում է բազմաթիվ գիտակարգերում՝ սկսած բժշկությունից մինչև տնտեսագիտություն, քաղաքագիտություն և հոգեբանություն: Այն անգլերենից թարգմանվում է որպես *հարված*, *ցնցում* և նկարագրվում որպես պաթոլոգիական պրոցես, որը, ի պատասխան արտակարգ գրգռիչների ազդեցության, սրընթաց զարգանում է և ուղեկցվում կենսական կարևորության համակարգերի գործունեության ծանր խաթարմամբ: Շոկը ոչ հազվադեպ հանգեցնում է կոլապսի (համակործանման) [1]: Շոկի թողած հիշողությունները լինում են շատ վառ, մանրամասնված և անջնջելի. մյուս կողմից՝